



Մխիթար Գոշ

Գիրք Դատաստանի

19

ԳԼՈՒԽ ՄԺԹ ՎԱՍՆ ՈՐ ԱՆԿԱՆԻՆ Ի ԾԱՌԷ ԿԱՄ ՅԵԿԵՂԵՑՈՅ
Ի ՎԱՅՐ

Այլ որ յաղագս ի ծամէ անկեալ մարդոյ մեռելոյ հարցեալ էիր կամ թէ խեղդելով կախեալ գծամէ, չկայ ինչ մեղանս տնկոցն, զի անշունչ եւ անզգայք են, ոչինչ եղեն պատճառք մահու նոցա, որ այնպէս պատահեաց: Այլ թէ առնիցեն ըստ Օրինացն Մովսիսի, յորում հրամայեաց Աստուած վասն անասնոցն, եթէ եղեւ ի նոցանէ յանօթ պղծութեան ոգոց եւ մարմնոց անասնագիտաց մարդոց, զկաթն նորա մի՛ կերիցեն, թէ յայնազգ կենդանեաց իցէ, եւ զանասունն քարկոծ արասցեն, եւ զմիսն շունք կերիցեն: Նոյնպէս եւ թէ եղջերաւորք հարկանիցեն զմարդ, եւ մեռանիցի, սպանցեն զանասունն եւ մի՛ կերիցեն. եւ ոչ զի մեղանք են, այլ զի անօթք եղեն մեղանաց պղծութեանն եւ սպանութեանն: Ըստ այսմ օրինակի թէ եւ առնիցեն զայս՝ հատանել գտունկն զայն, զի մի՛ կերիցեն ի պտղոյ նորա, բայց եթէ յարմատոյ նորա այլ բուսցի եւ պտուղ տացէ, կերիցեն անխտիր, որպէս եւ ծնեալք յանասնոց աստի անխտիր են: Չայս հաւասարապէս ըստ Օրինացն նոյնպէս եւ եկեղեցի ընդունի: Այլ թէ յեկեղեցոյ անկեալ ի խոնարհ, եւ թէ քար անկանիցի յեկեղեցոյ ի վայր ի վերայ մարդոյ, եւ մեռանիցի, անվնաս է եկեղեցին, մատուցի ի նմա պատարագ, որպէս եւ կամի Տէր: Այլ ի դէպ թուի ատուրս ինչ, որպէս մօր՝ ի վերայ ծննդնց, ունել սուգ. եւ զայդ որպէս կամին՝ արասցեն:

ԳԼՈՒԽ ՄԻ ՎԱՍՆ ԳՈՂՈՑ Ի ՓԱՅՏ ՀԱՆԵԼՈՅ

Վասն գողոց ի փայտ հանելոյ էիր հարցեալ: Եթէ այլազգի իցէ եւ եթէ քրիստոնէայ, եւ քրիստոնէի հրամայիցեն ի փայտ քարշել, եթէ հնար իցէ՝ խոյս տացէ ի տեղոջէն, ապա թէ ոչ՝ կաշառով գերծցի: Իսկ եթէ այդոքիկ ոչ օգնեսցեն, ապա զհրամայեալսն ի տերանց հարկատրաբար պարտ է կատարել, այլ ոչ առաւելութեամբ, որպէս հրամայէ Յովհաննէս զհնուորացն, թէ մի՛ աւելի քան զհրամայեալսն ձեզ առնիցէք, քանզի Աստուած ի սիրտս հայի, եւ մարդ՝ յերեսս, որպէս հրամայեաց Տէր Սամուէլի:

ԳԼՈՒԽ ՄԻԱ ՎԱՍՆ ՍՊԱՆԵԼՈՅ Ի ԿԵՆԴԱՆԵԱՑ

Այլ թէ մարդոյ լիցի ջորի խումար, կամ ձի աքհան կամ մարդակեր, որպէս գուարակագլուխ ձին Աղէքսանդրի, կամ եզն հարկանող, եւ նա գիտասցէ, եւ այլք ազգ առնիցեն նմա եւ զվնասն ցուցանեն, եւ նա անհոգս արասցէ եւ ոչ հնարեսցէ գնուսս, որպէս արժանն էր, եւ կիցս ընկեցեալ, կամ խածեալ, կամ հարեալ սպանանիցէ զոք, տէր նորա մահապարտ է, եւ անասունն սպանցի, ապա թէ ոչ զիտէր՝ անպարտ է: Եթէ յանսուրբ անասնոց իցէ՝ թէ ձի, թէ ջորի, թէ էջ, ի մեռելոց տէրքն տայցեն, զի ի պէտս հոգոց նոցա ծախիցեն: Սակայն յայտնեսցեն զպատճառն եւ այնոցիկ վաճառեսցեն, որ կարող են խրատել: Եւ զայս դատաստան եղաք երբեմն ըստ Օրինացն, այլ հաստատել կանոնօք կամեցաք՝ մասամբ առաւելեալ:

ԳԼՈՒԽ ՄԻԲ ՎԱՍՆ ՈՐ ՂՐԿԷ ԶՄԱՐԴ Ի ՃԱՆԱՊԱՐՀ, ԵՒ ՄԵՌԱՆԻ ԿԱՄ ԱՅԼ ԻՆՉ

Վասն զմարդ ի ճանապարհ դրկել ունէք բազում օրինակք տեսանին ի հարցմանս խղճի եւ անխղճի: Չի են ոմանք, որ ի գործ մշակութեան են կարգեալք ի տերանց իրեանց, եւ կէսք՝ յայգեգործութիւն, եւ այլք՝ ի զհնուորութիւն, եւ դարձեալ այլք՝ ի յայլ գործ, որպէս հասարակաց մերոց կենացս օրինօք պատրաստեալ է: Այսոցիկ, որոց ի գործս իրեանց եկեսցէ որոգայթ մահու, անպարտ են տէրքն նոցա, մանաւանդ այնոցիկ, որք զպատրաստութեան պատուէրն հանապազ կացուցանէ ի լսելիս հնազանդելոց իւրոց: Ապա թէ

հասարակաց միաբանութեան սիրոյ եւ խաղաղական մերոց կենաց զընդդէմսն հրամայիցեն գործել տէրք ծառայից, եւ անդ պատահի ումեք մահ կամ սպանութիւն, մահապարտ է տէրն նորա: Դարձեալ՝ եթէ որ ի նոցանէ ծանուցանէ տեառն իրում զվնասն, որ առաջի կայ, եւ տէրն անհոգացեալ անպատրաստաբար առաքէ ի գործն, եւ պատահի վնասն, յորմէ խիթայր, որ առաքեացն՝ արեան պարտ է:

ԳԼՈՒԽ ՄԻԳ ՎԱՍՆ ՈՐՔ ՏՂԱՅ ՈՒՍՈՒՑԱՆԵՆ

Ոչ է պարտ վարձու գմանկունս ուսուցանել ըստ կանոնաց հրամանաց: Եթէ որքք իցեն, գամենայն խնամ տանել նոցա ի դէպ է, ապա թէ չիցեն՝ զկերակուր եւ զհանդերձ միայն իրքն հոգասցեն: Եւ եթէ կարողք իցեն եւ ըստ ինքեանց յօժարութեանց ընծայ ուսուցողացն տացեն, արժան է հոգեւոր սերմանողացն գնարմնաւորսն հնձել, իսկ եթէ աղքատ՝ ոչ պահանջել: Այլ եթէ որ հակառակեացի եւ բռնաբարէ, դատաստանաւ է, զոր ինչ ի մանուկն ծախեալ իցէ, զայն միայն հատուցանել, այլ ոչ զհոգեւորն շնորհի: Այդոցիկ զհետ երթալ դատաւորաց արժան է հոգեւորապէս:

ԳԼՈՒԽ ՄԻԴ ՎԱՍՆ ԱՐԲԵՑՈՂՈՒԹԵԱՆ

Եւ զարբեցութեան բազումք անգիտանան զսահման յառաջնորդաց եւ ի սպասաւորաց եկեղեցոյ: Միայն եթէ ոչ ժայթքեն՝ համարձակին ի գործ Արդ, դնելի է զսահմանս նոցա: Արբեցութիւն ըստ ստուգաբանութեան յազեցումն իսկ է, իսկ ժայթքելն եւ կամ ոչ՝ ի կազմուածէ բազում անգամ պատահի մարմնոյ: Իսկ եթէ սահման արբեցութեան յազեցութիւն է, ապա եւ սահման ոչ արբենալոյ անյազեցութիւն է: Դարձեալ՝ նշանակ արբեցութեան դեղեւումն մարմնոյ է եւ բանի: Արդ, որ ըստ այսմ սահմանի կամ նշանի իցէ, ի բաց կալ արժան է յիրաքանչիւր սպասաւորութենէ եւ լնուլ զապաշխարութեան չափն եւ ապա մատչիլ ի գործ շնորհին, իսկ եթէ անփոյթ արասցեն՝ ընդ դատաստանօք արբեցողացն են:

ԳԼՈՒԽ ՄԻԵ ՎԱՍՆ ԿԱՐԳԱՑ ԵԿԵՂԵՑՈՅ ԵՒ ՏԱՆ ԹԱԳԱՒՈՐԻ

Չի՞նչ գործ մարդոյ՝ գաստուածպաշտութիւն ծանեաք: Ապա արժան է մարդոյս քննել զպաշտօնակցաց իւրոց, որով մարթագոյն զինքն ջանայցէ առնել մարտիրս եւ զուարթունս՝ առ նոսա հայելով, եւ զկնի այտորիկ հասու լինել կարգաց եկեղեցոյ եւ թագաւորաց, զոր պաշտենք: Արդ ահա, որպէս ամենեցուն յայտնի է, երկու արարածք եղեն խորհրդականք եւ բանատրք՝ հրեշտակք եւ մարդիկք. մինն՝ ի պարզ եւ յանխառն բնութենէ, իսկ միւսն՝ ի բազմաց գոյացեալ: Եւ Մովսէս ի սկզբանն ոչ գրեաց յաղագս հրեշտակաց եւ վասն մարդոյ պատմեաց՝ ասելով, եթէ ստեղծ Աստուած զմարդն հող յերկրէ եւ փշեաց յերեսս նորա շունչ կենդանի, եւ եղեւ մարդն հոգի կենդանի: Այլ ապուշքն, այսինքն՝ տգէտք, կարծեն զԱստուած բերանով եւ այլովք գործիւք վարիլ եւ զանբաւանդակելին ի զգայութիւն բաւանդակեալ. այլ իմանալի է զփշեալն՝ կենդանացոյց կամ հոգիացոյց: Նոյնպէս զիտեա եւ զհողն յերկրէ՝ ոչ մեկին իմանալ հող, այլ բաւանդակ զշորեսին բնութիւնսն ունելով՝ զցամաքն եւ զխոնասն, զջերմն եւ զցուրտն, եւ զհողմն: Որպէս բժշկացն մանկունք բաժանեն զհողոյն ցամաքութիւնն յոսկերս, եւ զմարմինն՝ ի խոնասութիւն ջուրցն, եւ զջրոյն՝ յարեան երակսն, զցրտութիւն հողմոյն՝ ի շնչերակսն, զջերմութիւն հրոյն խառնեն ընդ ամենայն: Այլ եւ արականս եւ իգականս բաժանեն եւ զմիսն եւ զմորթն իգական ասեն: Եւ զայս ամենայն Մովսէս ոչ ասաց եւ ոչ զբնութիւն հրեշտակաց, սակայն լինելութիւն է նոցա: Իսկ արդ, անե՞ղք իցեն, կամ ինքնե՞ղք, կամ նա՞խ քան զսկսանիւն արարածոց, վասն որոյ ոչ ասաց Մովսէս, թէ արար Աստուած զհրեշտակս, այլ թէ հրամայեաց սերովբէիցն բոցեղէն սրով պահել զճանապարհ ծառոյն կենաց: Թէ այդ այդպէս է, ապա անեղ պարտինք իմանալ եւ զջուրն, զի ասաց, թէ ի սկզբանէ արար Աստուած զերկին եւ զերկիր, եւ ոչ ասաց, թէ՛ զջուրն, այլ թէ երկիր էր աներեւոյթ եւ անզարդ, եւ հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց: Այլ իմանալի է մեզ ասել, թէ մինչ արար Աստուած զերկին եւ զերկիր, ընդ նմին արար զամենայն զօրութիւնս երկնից, եւ զջուրս, եւ զքարս եւ զամենայն, որ ինչ յերկրի, զի երկիրս հող միայն ասի ըստ Եբրայեցոց բարբառոյն: Ապա եւ ջուրք, ուրեմն, ընդ երկիր արարան, որպէս եւ Դաւիթ ասէ՝ նորա է ծով, եւ նա արար զնա, եւ զցամաք ձեռք նորա ստեղծին: Եւ ընդ երկնի հրեշտակք արարան, ասելով՝ ո՞ր արար զհրեշտակս իւր հոգիս եւ զպաշտօնեայս իւր ի բոց հրոյ: Հրեշտակս եւ պաշտօնեայս լսելով՝ դասս ոչ յայտնեն, այլ սեռական անուանեն զանունն: Բայց Մովսէս այսպէս ծածկաբար ոչ միայն զդասս ոչ յայտնեաց, այլ եւ ոչ իսկ յիշեաց զհրեշտակսն ի սկզբանն, այլ յետոյ ասաց առ Աբրահամու, եթէ

եզիտ հրեշտակն զԱզար յանապատին. եւ դարձեալ ասէ՝ եկին հրեշտակք ի Սողոմ: Եւ ոչ կերպարանս ինչ ասաց, այլ իբրեւ զարս երեսալ. ոչ միայն զոցա, այլ եւ ոչ զքերովբէիցն եւ ոչ զսերովբէիցն ինչ ասաց զկերպարանս: Իսկ Յակոբ ի տեսլեանն ասէ զկերպս հրեշտակաց, որպէս Ակիողաս ցուցանէ, ասելով. տեսանէր սանդուխտս հաստատեալ յերկրի, որոյ գլուխն հասանէր յերկինս, եւ բազմութիւն մարդկան թեւտորաց, որ ելանէին եւ իջանէին: Թոի ինձ՝ եւթանասնիցն կարծելով վասն բանին, զանուանս հրեշտակացն բաւական համարելով, զկերպսն ոչ յիշեն: Սոյն կերպի լսենք եւ զքերովբէսն, զոր ոսկի արար Սողոմոնն եւ եղ ի տաճարին, զոր արարեալ էր Մովսէս ի խորանին երկթեւեանս եւ թէ ի թեւ կցող, որք հովանի ունէին ի վերայ քաւութեանն: Դարձեալ եւ ի մեքենովթսն լսենք քերոքք, եւ առիծունս, եւ եզինս, եւ ուսք մարդոյ եւ ձեռս, անիս՝ որպէս կառաց: Եւ ոչ ասեն ստուգի կամ կարեն հասու լինել դասուցն եւ ոչ կերպիցն, այլ միայն նմանեցուցանեն, որպէս զթիթեղունս թռուցեալս լուսերանս: Իսկ Միքիաս զգօրս երկնից ասէ զօրուցուցանել շուրջ կացեալ զաթոռովն Աստուծոյ եւ ոչ զթի դասուցն եւ ոչ զանուանս կոչէ: Բայց Եսայի ասէ զանուանս սերովբէիցն եւ վեցթեւեան կերպի զփառաբանութիւնն յայտնէ: Իսկ Եզեկիէլ այլ դասս յայտնէ եւ յաւելու շորեկերպեանն եւ շորեքթեւեանն. եւ այս նման է մեքենովթայ տաճարին: Բայց փոխանակ նորա արմաւենոյն՝ սորա արծուին է, թէպէտ եւ ի խորհուրդ առ ի միտս գնոյն բերէ, սակայն կերպիւն որոշի: Տեսանէ Եզեկիէլ եւ անիս, այսինքն՝ սայլս, այլակերպս եւ ոչ որպէս մեքենովթայ նման, այլ անի ի մէջ անուաց, նորոգ եւ հրաշալի: Այս այլ դասս թոի ինձ, քանզի անձնական ասէ զանիսն, զի ոգի կենդանի գոյր ի նոսա: Եւ ասէ այլ դասս, որ բազմաչեայքն են, ասէ եւ հուր ահագին խառնեալ եւ բորբոքեալ. զայս առանձնական ակնարկէ: Թէպէտ եւ զայս ամենայն ասացին մարգարէքն, սակայն ծածկաբար եւ ոչ յայտնապէս զհրաքանչիւր դասս: Նաեւ ոչ Տէրն յԱւետարանի անդ այլ ինչ յայտնեաց, բայց միայն զբազմութիւնս հրեշտակաց գնդացն: Բայց սուրբ առաքեալն Յուդա պարզ եւ յայտնի ցուցանէ մեզ եւթն դասք եւ զանուանս իրաքանչիւրոցն ասէ՝ Հրեշտակք, Հրեշտակապետք, Իշխանութիւնք, Տէրութիւնք, Սերովբէք, Քերովբէք, Պետութիւնք: Իսկ սուրբն Դիոնեսիոս՝ պարծանքն Աթենացոց, Արիսպագացին, առաքելոյն աշակերտ եւ հետետող, ինն դասս ասաց. զոր առաքեալն երկու ի մի երես ասաց՝ ի զատ ասաց զՀրեշտակապետսն ի Հրեշտակացն եւ զՔերովբէսն ի Սերովբէիցն: Եւ թուեաց գնոսա ինն դասս ստուգութեամբ այսպիսի

կարգաւորութեամբ, յորմէ եւ մեր ուսեալ՝ պատմենք քում հարցասիրութեանդ, որ են. Ներքին դասը Հրեշտակացն, որք են պատգամատրք եւ հրամանատարք. եւ փառաբանութիւն է նոցա, գոր հովիւքն լուան՝ փառք ի բարձունս Աստուծոյ: Երկրորդ դաս Հրեշտակապետացն է. եւ փառաբանութիւն է նոցա՝ Տէր, ողորմեա քո արարածոցս, գոր Չաքարիասն լուաւ, թէ՛ մինչեւ ցե՞րք չողորմեսցիս Երուսաղէմի եւ քաղաքացն Յուդայ: Երրորդ դաս Իշխանութեանցն է, որք են իշխանութեանցն Աստուծոյ փառաբանիչք, ասելով՝ տուաւ քեզ հեթանոսք ի ժառանգութիւն եւ իշխանութիւն քեզ յամենայն ծագս երկրի: Չորրորդ դաս Չօրութեանցն է, որք գօրութեանցն Աստուծոյ են փառաբանիչք, ասելով՝ Տէր հգօր ի պատերազմի: Հինգերորդ դաս Աթոռոցն է, որք են փառաբանիչք աթոռոյն Աստուծոյ, ասելով՝ աթոռ քո, Աստուած, յաւիտեանս յաւիտենից: Վեցերորդ դաս Պետութեանցն է, որք են փառաբանիչք քահանայութեանն Աստուծոյ, ասելով՝ դու ես քահանայ յաւիտեան: Եօթներորդ դաս Տէրութեանցն է, որք են փառաբանիչք տէրութեանն Աստուծոյ, ասելով՝ արքայութիւն քո՝ արքայութիւն յաւիտենից: Ութերորդ դաս Սերովբէիցն է, որք լսին բերանք հրեղէնք, որք են երեքսրբենին փառաբանիչք, գոր լուան Եսայիաս՝ սուրբ սուրբ, սուրբ: Իններորդ դաս Քերովբէիցն է, որք լսին վերինք կամ հանճար մեծութեան, որք գովողք են մեծութեանցն Աստուծոյ, ասելով՝ Տէր գօրութեանց, լի են երկինք եւ երկիր փառօք քովք: Այս են իններորդ դասք երկնայինք եւ այս է գործ նոցա: Աւելի, քան զայս, մի՛ այլ ինչ իմասցուք, որպէս եղկելին Որոզինէս, որ աւելի, քան զգրեալսն, իմանալով՝ կործանեցաւ անկանգնելի, գերկնային դասսն զանագանելով. հրաշալիս իմն բարբառելով, զապիրատութիւն ի բարձունս խորհեցաւ՝ այսպիսի ասելով բան, թէ մարդիկ ոչ տեսանեն զհրեշտակս, եւ ոչ հրեշտակապետք՝ զհոգիս մարդկան, եւ Հոգին Սուրբ ոչ տեսանէ զՈրդի, եւ Որդին ոչ տեսանէ զՀայր: Բայց մեզ քաւ եւ մի՛ լիցի այսպիսի բարբառել հայհոյութիւն, այլ ասել զերկնային դասս փառաբանիչս աստուածութեանն: Եւ կարգաւ կայանին բաժանեն զլուսաւորութիւնն եւ ապա չափով լուսաւորութեանն դասս առեալ, որպէս անձն է Հօր, նոյնպէս եւ անձն Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ: Եւ արդ, որ ինչ երկնային դասուցն է, բաւական լիցի այդչափ: Իսկ եկեղեցի որպէս հարսն մի գեղեցիկ, որ պահի ի համար մեծի փեսայի՝ որդոյ թագաւորին եւ զիր սենեակն յօրինէ կարգաւորութեամբ, որպէս զի նմանագոյն ինչ արքունական կարգաց յարդարիցէ զպատիւ որդոյ թագաւորին: Նոյնպէս եւ եկեղեցի երկնային դասուցն ընտանութիւն զիրն կարգեաց զնմանութիւն եւ զդասս ինն թուով, քանզի ի

խորանին ինն դասս տեսանենք գՂեւտացոցն եւ գպաշտօնէիցն, քանզի ոչ ամենեքեան միում արժանաւորեցան կայանիւ, այլ ըստ չափոյ արժանաւորութեանն առին զսպասաւորութիւնն:

Առաջին դասն՝ Մովսէս եւ Ահարոն եւ որդիք նորա:

Երկրորդ՝ գունդն Ամրամայ:

Երրորդ՝ գունդն Սահառայ:

Չորրորդ՝ գունդն Քերովնի:

Հինգերորդ՝ գունդն Ոգիէլի:

Վեցերորդ՝ դասն Ռաւբենի:

Եւթներորդ՝ դասն Սեմէի:

Ութերորդ՝ գունդն Մտղի:

Իններորդ՝ գունդն Մուսեայ:

Ապա թէ ասիցէ որ, թէ Մովսէս եւ Ահարոն ի նոյն գնդէ իցեն, զիտասցէ, զի գատոյց գնոսա Աստուած, զի նոքա էին քահանայք՝ մատուցանել պատարագս, եւ արկանել խունկս քաւութեան, եւ իջուցանել զխորանն, եւ ծածկել գնա նուարտանան, այսինքն՝ սեկէ ծածկոցան: Ապա այլ սպասաւորք մատչէին եւ բառնային ըստ արժանաւորութեանն, ոմանք՝ գտախտակն եւ զքաւութիւնն, եւ ոմանք՝ զցիցս խորանին, եւ զապաւանդակն սն, եւ զկրսերագոյն կահ սպասուն սրբութեան: Եւ բանակիլ ոչ ընդ այլ դասս հրամայեցաւ Մովսիսի, այլ յարեւելից կողմանէ խորանին: Արդ, ահա յայտնապէս ցուցաք, թէ ըստ երկնային դասուցն ինն երեւին, եւ ի հնումն՝ գՂեւտացիսն: Պարգեւս, առաքեալ Սրբո շոգոյն, համարի. բան իմաստութեան, բան զիտութեան, հաւատս, շնորհս բժշկութեան, աշողութիւն զօրութեանց, մարգարէութիւն, ընտրութիւն հոգոյ, ազգս լեզուաց, թարգմանութիւնս լեզուաց: Դարձեալ յայտնապէս ցուցանէ մեզ առաքեալն ինն դասս եկեղեցոյ, ասելով այսպէս՝ զորս եղ Աստուած յեկեղեցոջ, այս են.

նախ՝ գԱռաքեալս,

երկրորդ՝ գՄարգարէս,

երրորդ՝ գՎարդապետս,

չորրորդ՝ գԶօրութիւնս,

հինգերորդ՝ Շնորհս բժշկութեան,

վեցերորդ՝ Օգնութիւնս,

եւթներորդ՝ Վարիչս,

ութերորդ՝ Ազգս լեզուաց,

իններորդ՝ թարգմանութիւնս լեզուաց:

Որքն են այսոքիկ. Առաջին դասք եկեղեցոյ՝ պատրիարքք, որ թարգմանի հայրապետք, որք ունին զաթոռ չորից ատետարանչացն: Եւ արդ, տես զգօրութիւն խորհրդոցն՝ փոխանակ չորեքկերպեան կենդանեացն եղան սուրբ ատետարանիչքն, որ նշանակէ. դէմք մարդոյն՝ գՄատթէոս, քանզի որպէս զմարդ ծնեալ ասէ գՔրիստոս ի Բեթղեհէմ: Իսկ Մարկոս՝ դէմք առիծու նշանակի, քանզի նա ասէ՝ եւ ել Քրիստոս իբրեւ զառիծ ի Յորդանանէ ի Դաթան: Եւ սատանայ առիծ ասի վասն շաղղակերութեան եւ զազանաբար կապտելոյն եւ գիշելոյն զկենդանիսն: Այլ Փրկիչն մեր կոչեցաւ առիծ վասն զօրութեանն եւ ի վերայ կենդանեացն թագաւորելով: Չնոյն եւ Մարկոս ասէ՝ ել Քրիստոս ի Յորդանանէ իբրեւ զառիծ, այսինքն՝ թագաւորել: Իսկ դէմք եզինն նշանակէ գՂուկաս, վասն զի նա ասէ՝ փոխանակ աշխարհի զենեալ: Իսկ դէմք արծուոյն նշանակէ զՅովհաննէս, որպէս ասէ զվերստին քարոզութիւնն, եւ ոչ յերկրէ եւ ոչ ի մարմնատրութիւնն սկսանի, որպէս եւ այլքն, այլ նման արագաթեւ արծուոյ սրաթոյիչ լեալ՝ սկիզբն արարեալ ասէ. ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն. որով ամենայն եղեւ: Յիրաւի անուանէ զնա արծուի բարձրաթոյիչ եւ թռչուն երկնից: Արդ, ահա ցուցաք փոխանակ երկնից՝ զեկեղեցի, եւ փոխանակ չորեքկերպեան կենդանեաց՝ զչորս ատետարանիչսն, եւ

նոցա փոխանակ՝ զհայրապետացն դասս եւ զնոցին աթոռսն: Աւագ եւ մեծ աթոռ
Անտիոքայն՝ զՄատթէոսին, Աղէքսանդրուն՝ զՄարկոսին, Հռոմայն՝ զԲուկաստուն,
Եփեսոսին՝ զՅովհաննուն: Այս կարգաւորութեամբ վարեցաւ եկեղեցի մինչեւ
յաւուրս Յուստիանոսի թագաւորին, ըստ չորեքկերպեան կենդանեացն,
չորեքկուսի եղենական բխմանն, ըստ չորեքեզերեան տիեզերաց, ըստ չորից
աւետարանչացն բաժանեցաւ աշխարհս իշխանութիւն չորից աւետարանչացն:
Իսկ Յուստիանոս իբրեւ թագաւորեաց, կամ եղեւ փոխել զաթոռ սրբոյն
Յովհաննոս յԵփեսոսէ ի Կոստանդինուպօլիս, եւ հաւանեցուցանել զժողովն՝ եւ
զսրբոյն Մատթէոսի՝ յԱնտիոքայ յԵրուսաղէմ, զի մինչեւ ի նորա ժամանակն
ինքնագլուխ էին եպիսկոպոսքն, ոչ ինքեանք՝ ընդ այլօք եւ ոչ այլք՝ ընդ նոքօք.
Կոստանդինուպօլիս՝ վասն թագաւորելոյ քաղաքին, եւ Երուսաղէմ՝ վասն զի
քաղաք է երկնաւոր թագաւորին: Բայց ի ժողովսն հրամայեցին սուրբ հարքն՝
Երուսաղէմի եպիսկոպոսին գեր ի վերոյ նստիլ: Ահա, ասացաք զեկեղեցոյ
առաջին դասն՝ զհայրապետսն, որք ունին զառաքելական զգեստն եւ զեմփորոն
հինգկրկին: Եւ գործ է հայրապետին ձեռնադրել զարհիեպիսկոպոսս, որք են ընդ
վիճակաւ ի չորս բաժնի տիեզերաց: Եւ նա տայ հրաման վասն ժողով առնելոյ:
Երկրորդ դասք եկեղեցոյ՝ արքեպիսկոպոսք: Կարգ է նոցա սպիտակ հանդերձ
մինչեւ ծածկէ գոտս՝ արքականոս պճղնաւոր, եւ շուրջառ, եւ եմփորոն
չորեքկրկին: Գործ է նոցա ձեռնադրել մետրապօլիտս, այսինքն՝
մայրաքաղաքաց եպիսկոպոս, եւ օրհնել ձէթ կնքոյն: Եւ ունին իշխանութիւն
ձեռնադրել պատրիարգս: Երրորդ դասք եկեղեցոյ՝ մետրապօլիտք, որ կոչին
մայրաքաղաքաց եպիսկոպոսք, որք ունին զնոյն հանդերձս սպիտակս մինչեւ
ցպճղունսն, եւ շուրջառ, եւ եմփորոն երեքկրկին: Գործ է նոցա ձեռնադրել
եպիսկոպոս ի վերայ բերդից եւ գեղից եւ օրհնել զձէթ կնքոյ վասն յաւելուածին
արկանելոյ յառաքելական ձիթոյն, զոր պահէ եկեղեցի յաւելուածով: Եւ երեք
մետրապօլիտք ունին իշխանութիւն ձեռնադրել իւրեանց արքեպիսկոպոս:
Չորրորդ դասք եկեղեցոյ եպիսկոպոսք են, որք ունին զնոյն կարգ: Գործ է նոցա
ձեռնադրել զամենայն վիճակաւորս: Եւ երեք եպիսկոպոսունք ունին իշխանութիւն
ձեռնադրել իւրեանց մետրապօլիտ: Եւ գործ է նոցա սեղան օրհնել, եւ աւագան,
եւ իւղ օծութեան: Հինգերորդ դասք եկեղեցոյ՝ եռիսունք եւ պապասք, որք են
քահանայք եւ երիցունք: Քահանայքն ի քաղաքս լինին, եւ երիցունքն՝ ի գեղս եւ
յազարակս. եւ երկոքեանն մի են, բայց յաղագս պատուոյն եւ անուանքն
զանագանին: Բայց կարգ է նոցա՝ նոցայն, բայց յեմփորտէ, զի սոքա ուրար

միայն արկանեն ի վերայ երկոցունց ուսոցն, նոքա եւ թիկնոցի իշխեն կալ ի վերայ բենին: Եւ գործ է սոցա պատարագ մատուցանել, եւ մկրտել, եւ պսակել, եւ ուր եպիսկոպոս չլինի, օրհնել զխաչն եւ զմատաղն: Եւ թէ հրաման առեալ իցէ յեպիսկոպոսէն, եւ զհողն օծութեան իշխանութիւն ունի օրհնել եւ ձեռնադրել զդպիրն, եւ զգրակարդացն, եւ զկրօնաւորն: Վեցերորդ դասք եկեղեցոյ սարկաւագունք են: Եւ կարգ է նոցա նոյն, բայց հոլանի կայցեն, այսինքն՝ զլիսիբաց, եւ զօտելոյծ եւ զահեակ ուսովն արկեալ գուրարն: Գործ է նոցա Աւետարան կարդալ եւ քարոզել, եւ զսկիքն եւ զքշոցն բերել ի սենեկէն ի սեղանն եւ ի սեղանոյն արտաքս զբաշխումն, եւ խունկ ծխել եւ առնել, որ ինչ միանգամ սպասաւորութիւն է. եւ նստիլ՝ ոչ ամենեւին, բայց յետ արձակման ժամուն, երբ հրամայէ քահանայն: Են եւ ի կանանց սարկաւագուհիք, ձեռնադրեալս վասն քարոզելոյ կանանց եւ կարդալ Աւետարան, զի մի՛ սոցէ անդ այր, եւ մի՛ նա արտաքս, քան զվանս կանանց, ելանիցէ: Բայց յորժամ քահանայք մկրտութիւն առնեն կատարեալ կանանց, զան սարկաւագուհիքն յաւագանն եւ ջրով լուսացեն զկանայսն, եւ քահանայն օծանէ ի ներքոյ վարագորին: Եւ կարգ է սարկաւագուհեացն ամենայն ինչ հաւատաւորացն, բայց ի վարս պինդն, խաչ ունենայ ի վերայ ճակատին եւ կիսաթիկնոց՝ յաշմէ կողմանէ ուսոցն: Եւ մի՛ նոր ինչ կամ անկարգ համարեսչիք զայս, ով սուրբ եղբարք, այլ ի սրբոց առաքելոցն աւանդութենէ ուսանիմք, քանզի ասէ, թէ՛ յանձն առնեմ ձեզ զՓիբէ զքոյր մեր, որ է սպասաւոր եկեղեցոյն: Եւ թներորդ դասք եկեղեցոյ եպիսկոպոսք են, որ կոչին քորեպիսկոպոսք այժմ, զլիսաւոր սարկաւագաց: Եւ կարգ է նոցա նոյն, եւ ուրար զերկոսին ուսովքն, եւ կալ զօտելոյծ եւ զլիսիբաց, եւ իշխանաւ եպիսկոպոսին օրհնեն եկեղեցի եւ հրաման ունել ի վերայ քահանայից եւ եկեղեցականաց: Ութերորդ դասք եկեղեցոյ՝ զլիսաւորք եպիսկոպոսաց, որք են կաթողիկոսք, որ ունին զպատուականագոյն աթոռն՝ նմանեալ սերովբէից: Կարգ է նոցա նոյնպէս հոլանի, այսինքն՝ զլիսիբաց, եւ զօտելոյծ եւ ուրար զերկոսին ուսովքն: Բայց գործ է նոցա ձեռնադրել զեպիսկոպոսունս եւ ինքնական օրհնել զհողն օծութեան: Իններորդ դասք վերագոյն քան զամենեսեան՝ պապիոս, որ այժմ կոչեն ֆռանկք պապ, նմանեալ քերովբէից: Կարգ է նոցա հոլանի, այսինքն՝ զլիսիբաց, եւ զօտելոյծ: Եւ գործ է նոցա կարգել զդասս թագաւորաց. զի թէ մարդն պատկեր է Աստուծոյ, եւ որք ի Քրիստոս մկրտին՝ զՔրիստոս զգեցեալ են, որչափ եւս առաւել թագաւորք հաւատացեալք, որ ի վերայ զլիսոյն բերեն զնշան տէրունական: Պարտ է նոցա նմանել Քրիստոսի, որ միայն խոնարհամտել եւ

գշարչարանան Քրիստոսի ի մարմնի իրում կրել, այլ փառացն նմանել որ
ցուցանէ զքաղցրութիւն Տեառն եւ Փրկչին մերոյ, զի եւ հեթանոսաց թագաւորաց
լուեալ՝ յօժարեսցին գալ յերկրպագութիւն Տեառն Աստուծոյ մերոյ:

Եւ այս են նմանութիւն երկնաւոր դասուցն.

Հրեշտակքն՝ առաքելական զգեստի յաղօթս.

Հրեշտակապետքն՝ քղանցի.

Իշխանութիւնքն՝ գնդաւ առաքելական զգեստի.

Ջօրութիւնք՝ առաքելական զգեստի.

Աթոռքն՝ հիւպատիկք.

Պետութիւնքն՝ առաքելական զգեստի.

Տէրութիւնքն՝ պսական առաքելական զգեստի.

Սերովբէքն՝ վեցթեւանք.

Քերովբէքն՝ ութթեւանքն եւ բազմաշեայքն:

Չայս ամենայն գնտաւ ածելով սրբոյն Կոստանդիանոսի թագաւորին, որ ըստ
դիւթութեան կարգ էին հեթանոսաց՝ գայն եղծեալ խանգարեաց եւ այսպէս
զերկնից եւ զեկեղեցոյ յարմարեաց զկարգս դասուցն ի պատիւ թագաւորութեանն
եւ գտեղիս իրաքանչիւր կայանացն որոշեաց եւ զգործն յայտնեաց, որ են
այսոքիկ. Առաջին դաս պաղատին, որ է դարպաս, եղենդիարք, որ են
պահապանք ոսկի վաղարին: Չգեստ է նոցա դիպակ ոսկեթելով կազմաւ, եւ
ունին գաւազան ոսկի: Եւ գործ է նոցա տանել յառաջ զագաւորողսն եւ գայլս, զոր
խնդրէ արքայն: Երկրորդ դաս՝ վեստիտորայն, որ են պսակակալք արքային:
Չգեստ է նոցա դիպակք արծաթաթելս եւ գաղտագէնք ի կոպաղս ոսկիս, որ է
կիսաթուր՝ ներքեւ հալաւին: Երրորդ դաս կանտիտորայն է, որ զոսկի տեգսն
ունին, այսինքն՝ զոսկով կազմած խիշտսն: Չգեստ է նոցա ծիրանի դիպակ

ճամկաւոր եւ մանեակ ոսկի՝ ի պարանոցսն: Եւ յորժամ ի ճանապարհ ելանէ արքայն, նոքա բառնան զխաչն սուրբ: Եւ ի նոցանէ լինին չորս արք, որք զգէնսն կրեն թագաւորին: Չորրորդ դաս պտոքստորայն է որք զվաղերս ունին եւ ասպարս երկաթիս: Եւ զգեստ է նոցա ասրիշմէ դիպակ: Եւ յորժամ վախճանի արքայն, նոքա են, որ զդագաղսն եւ զգահոյսն բառնան: Հիգերորդ դաս եսկոպոտիրայն է, որք լինին մեծահասակք եւ ունին վահանս կմբբաւորս եւ ասպարս փոքրս: Եւ զգեստ է նոցա կտաւսն ուղորկ, եւ վարշամակս, որ է փակեղն, եւ ջաղջեր յոտսն, եւ գօտի ոսկի կրկին: Եւ ի նոցանէ լինին՝ որք սրկբունք եւ մանդաւորք: Վեցերորդ դաս պաղատին՝ ստրատորքն, որք զճին թամբեն եւ հեծուցանեն զարքայն: Եւ զգեստ է նոցա ուռետուռ կապայ, եւ ի ձեռս իւրեանց՝ թուր միասայրիք եւ ասպար փոքր: Եւ թներորդ դաս պաղատին սքողարք են: Եւ զգեստ է նոցա գրատք կտաւիք եւ թեզնէ, բերանն դիպակով: Ունին նիզակս, որ է ռունք, եւ սեւ ասպարս: Եւ ի նոցանէ լինին՝ որք զդրոշսն, այսինքն՝ զնշանակն, եւ զվիշապագլուխսն կրեն եւ կոշին սիզնայք: Ութերորդ դաս պաղատին՝ դեկանիոնքն, որք են աղեղնաւորք: Եւ ունին կրկին վարոցս եւ ասպարս լոկ: Եւ սքեմ է նոցա, այսինքն՝ զգեստս, այծենի գրատք կարմիր, եւ ունին մուճակք: Եւ յորժամ արքայն ի թամաշա ելանէ, նոքա վարեն զամբոխն: Եւ զսոսա կոշեն Եբրայեցիքն քերեթին, այսինքն՝ աղեղնաւորք: Իններորդ դաս պաղատին՝ կիտտորքն, որք են սուրհանդակք հետեւակք: Եւ զգեստ է նոցա բամբակէ գրատք կազմաւ ճամկօք եւ զանկապանօք, ունին հողաթափս: Եւ են սոքա սպասաւորք: Եւ զսոսա կոշեն Եբրայեցիքն ոփելեթին, այսինքն՝ նետողք: Եւ ամենեքեան զլիսիբաց կան եւ գօտիս ունին ոսկով, բայց միայն սոքա են անգօտի: Այսոքիկ են դասք թագաւորութեան պահապանք, զհնուորութիւնք որձիք յիւրաքանչիւր կայանս, արտաքոյ ոսկի բեղարին, եւ այս է գործ նոցա եւ զգեստք: Են եւ այլ սպասաւորք արքունիք, ոմանք՝ որձիք, եւ ոմանք՝ կուրտք, որ ոչ են յինն զհնուորութեանցն, այլ արձակք են, ոչ դասք են, ոչ շափս քանեաց, ոչ կայք տեղեաց պահպանութեան, այլ երբեմն շատ լինին եւ երբեմն՝ սակաւ: Առաջին՝ դեմնտիտոսք, որք են պատգամաւորք: Երկրորդ՝ ռիքինարք, որք զյիշատակարանքն կարդան առաջի թագաւորին: Եւ ոսպիտարք ասին, որք արկանեն ձեռաց ջուր արքային: Չորրորդ՝ վինետորք ասին, որք զբաղանիս կազմեն եւ լուանան զարքայն: Հինգերորդ՝ տոհգլինարք, որք են տաճարապետք, որք զկոշեցեալսն ի հաց մատուցանեն առաջի արքային: Իսկ ի կոտորոցն լինին ակտարք որք են նշանագիրք: Եւ ոսպիտարք ասին, որք արկանեն ձեռաց ջուր

արքային: Ապոկրիսիարք ասին սպասաւորք եկեղեցոյ արքային: Իսկ փղակունքն՝ նոքա են կցորդասացք եւ արձակասպաշտօնք: Սպուղէք՝ կրօնաւորք քաղաքին, որոց գործ է նոցա զգուրդայս, եւ զպաշտօնն, եւ զկանոնն երգել: Իսկ արեղայք եւ մոնոզոնք, որք խարագնագգեստք են ըստ կամաց իրեանց գան ի պաշտօնն: Իսկ փղակունք եւ սպուղէս մոնոզոնքն՝ ոչ մոնաքոսքն, որք են միայնակեցունք եւ սպաշխարողք: Դոմենտիկոսք՝ որք են հաւատագիրք, որք զարտաքնոցն աստուածաբանութիւնս ուսին եւ եկեղեցականօքն վարժին: Այտքիկ ամենեքեան ոչ են յինն դասուէն եկեղեցոյ եւ ոչ եթէ ի սպասաւորութիւն ինչ հային, եւ ոչ յամբիոն ելանեն եւ ոչ ի բեմն, այլ են ամենեքեան փառաբանիչք, կարգեալք ի տան Տեառն: Եւ քանզի զայս ոչ վայրապար ինչ դրաք ի գիրս դատաստանի, այլ զի գիտասշիք, եթէ այտքիւք պարտին Հայք ի Հոռոմոց եւ ի Ֆռանկաց, որպէս Ադուանիցն ուսուցանէ Պատմութիւն եւ այլք: Վասն որոյ հարկաւոր է այս կարգ յեկեղեցի ի հայրապետաց կարգիլ, եւ թէ անփոյթ արարեալ՝ միշտ պարտաւոր ցուցանին յատեան դատաստանին: Քանզի ի մեր Լուսաւորչէն եւ այս դասք պաշտման երեւի յեկեղեցիս, ըստ որում ի սրբոյն յիշի յԵղիշէի Պատմութեանն եւ այս դասք, ասելով՝ ընդ ձեզ կան գրակարդացք եւ սաղմոսասացք: Նմանապէս եւ սարկաւագաց յիշուին անուանք ի կանոնս եւ յայս: Արդ, յայտ է յաւերածոյ եկեղեցեաց խանգարիլ եւ այս կարգի, եւ այլ ի հեղգութենէ ուղղչաց: Թէպէտ եւ այլ ինչ յօղեն պատճառք, սակայն արդարացուցանել ոչ կարեն: Եւ թէ այլազգ այտքիկ յիշատակի ի սրբոյն Դիոնէսիոսի գիրսն եւ աստ՝ այլազգ՝ փոփոխմամբ, սակայն զթիւն ամբողջ պահեն, ուստի ոչ ինչ երկբայելիք են: Արդ, ըստ ճշմարիտ դատաստանի վարելի է զեկեղեցի այսպիսի կարգաւ ըստ երկնայնոցն, զի թէ տուն զերկրաւոր թագաւորի ըստ այսմ յօրինի, ո՞րչափ եւս երկնաւոր թագաւորին Քրիստոսի. եւ նմա փառք յաիտեանս ամէն:

ԳԼՈՒԽ ՄԻՋ ՎԱՄՆ ՈՐ ԶՕՏԱՐ ՄԱՐԴ Ի ԲԱՆ ԴՐԿԷ, ԵՒ ՄԵՌԱՆԻ

Իսկ եթէ ոք գոք, որ չիցէ իւրն, ի գործ իւր առաքէ, եւ անդ որոգայթի, արեան պարտ է: Զգուշանալ հրամայէ կանոնքս՝ ոչ վայրապար գոք, որ չիցէ վարձկան եւ կամ այլ օրինակաւ իւր, ի գործ իւր առաքել, զի արեան դատաստան հրամայէ վնասելոյն լինել: Եւ այդ ցուցեալ է դատաստան հոգեւորապէս եւ

մարմնատրապէս: Սակայն քննութիւն լիցի օրինակի առաքողին երախտեաց եւ պատահման մահուն կամայի եւ ակամայի:

ԳԼՈՒԽ ՄԻԷ ՎԱՄՆ ՈՐ ՎԱՐՁՈՎ ԴՐԿԷ ՉՄԱՐԴ Ի ԲԱՆ

Այլ թէ վարձկան որ իցէ եւ ասիցէ ցոնատէր տանն, թէ առաքեալ զիս կամ տուր ինձ գործ, զի արարից, իսկ նա յառջապատրաստ ծանուցանէ նմա գորոգայթ մահուն, եւ վարձկանն առ կարիս հարկի իւրոյ յանձն առնու, եւ սա կրկին գանպարտութեան բանն ասիցէ նմա, եւ պատահի վարձականին մեռանել, անպարտ է: Եւ թէ անգգուշութեամբ ի բազմաց վկայեալ վնասն առաքիցէ կամ գործել հրամայիցէ, եւ անդ հասանիցեն նմա որոգայթք մահու, արեան պարտ է: Յայտնի է այս դատաստան կանոնական: Չի ըստ կամաց վարձկանին երթալ ի գործ՝ անպարտ է առաքողն, իսկ հարկատրեալն եւ ի վկայեալ վնասն առաքեալ՝ ընդ դատաստանաւ արեան է, թէպէտ եւ վարձատր իցէ:

ԳԼՈՒԽ ՄԻԸ ՎԱՄՆ ՈՐ ԵԿԵՂԵՑԻ ՀԱԿԱՌԱԿ ԵԿԵՂԵՑՈՅ ՇԻՆԷ

Եւ վասն հակառակ եկեղեցի շինելոյ հարցեալ էիր, գրեալ է վասն այսորիկ, թէ՛ որ քակէ զցանկ հայրենի, հարցէ զնա օձ եւ սպանցէ, այսինքն՝ զհրաման եւ զկարգ, զոր եղին մարգարէքն, եւ առաքեալքն, եւ վարդապետքն եկեղեցոյ: Արդ, որ զհարանցն մերոց գեղեալ կարգն խափանէ՝ հակառակ եկեղեցոյ եկեղեցի շինէ յեպիսկոպոսաց կամ յերիցանց, նզովեսցին ի մահ եւ ի կեանս եւ յամենայն քահանայական կարգէ լուծցին. եւ այլք, որ նոցին կամակիցք իցեն, զնոյն պատիժս կրեսցեն, եւ զշինեալ եկեղեցին ի ժառանգաւորս տեղեացն թողցեն իրաւապէս: Ապա թէ մարդասիրապէս արասցեն, զգինս աշխատութեան տացեն ցնոսա, ապա թէ այս ոչ լինիցի, քակեսցեն հանդարտութեամբ եւ մի՛ այրեսցեն: Իսկ եթէ ամենայն բազմութիւնքն եպիսկոպոսօք, եւ քահանայիք, եւ միաբան ժողովրդականօք զշինեալն կամեսցին, մի՛ որ հակառակ վիճաբանեսցէ ընդդէմ միաբանական հրամանացն: Ապա թէ յանդգնի որ եւ հուր դիցէ եկեղեցոյն կամ յաւագաց կաշառօք բռնութիւն բերիցէ ի մէջ եւ քակեսցէ զեկեղեցին, աստուածամարտ են այնպիսիքն եւ ընդ խաչահանունսն եղիցին, իսկ եթէ զղջանայցեն, մինչեւ ի մահ սպաշխարեսցեն եւ յետի օրն մահուան հաղորդեսցին: Լի ամենայն ճշմարտութեամբ եղեալ է այս դատաստան

կանոնական, զի հակառակ շինել յաղագս ազահութեանն է, խափանելի է, բայց կամօք եպիսկոպոսին եւ այլոցն հաստատի, զի մի՛ ժառանգութիւն որ զեկեղեցի առնիցէ, եւ այլ եկեղեցի ըստ պատշաճի չտայցէ շինել, զի միշտ եպիսկոպոսաց է ժառանգութիւն եկեղեցոյ եւ ոչ քահանայից ըստ ինքեանց կամաց:

ԳԼՈՒԽ ՄԻԹ ՎԱՍՆ ԱՔՍՈՐԵԼՈՅ ԵԿԵՂԵՑՈՅ

Արդ, եթէ որ արժանատր արքորանաց իցէ, որք միանգամ յեկեղեցական կարգէ իցեն, ըստ իրաւանց այսպէս լիցի. սարկաւագք եւ քահանայք լուծցին յեպիսկոպոսէ, զի նա է ձեռնադրող նոցա. սարկաւագուհիք՝ ի սարկաւագաց. եւ աշխարհականք, եւ հաւատաւորք, եւ կրօնաւորք եւ որք միանգամ ի քահանայէ ձեռնադրին՝ ի քահանայէ. եւ եպիսկոպոսունք՝ յիրեանց ձեռնադրողաց. եւ կաթողիկոս՝ կամ ի կաթողիկոսէ, կամ յիրոց ձեռնադրողաց եպիսկոպոսաց. իսկ վարդապետք՝ ի վարդապետաց հրամանատուաց: Այլ վարդապետաց ոչ է ըստ իրաւանց զքահանայ արքորել կամ առնուլ զկարգն, բայց միայն որոշել. նաեւ զհորաքանչիւր գդասս խրատել, եւ յանդիմանել, եւ յողորթիւն ածել իշխան լիցի, իսկ արքորելն՝ նոցունց իշխանօքն, այսինքն՝ ձեռնադրողօքն, արասցէ, զի բանի իշխէ ամենեցունց: Այլ հայրապետք ամենեցունց իշխեն, այլ ոչ ամենեքեան՝ նմա, բայց ձեռնադրողք նորա:

ԳԼՈՒԽ ՄԼ ՎԱՍՆ ԱՔՍՈՐԵԼՈՅ ԹԱԳԱԻՈՐԱՅ

Թագաւորք, կարգեալք յԱստուծոյ, որպէս Իսրայէլին, յԱստուծոյ բարձցին կամ արքորեսցին, իսկ ի մարդկանէ կացեալք՝ ի նոցունց արքորեսցին: Եթէ իշխանք թագաւորեսցուցեն, եւ ոչ ըստ արժանոյն վարէ զթագաւորութիւնն, ի նոցունց կարգողացն արքորեսցի. այլ որդոյ նորա ոչ է իրաւացի փոխել: Իսկ թագաւորութիւն սեպհական լիցի ի հօրէ անկեալ առ որդի: Իսկ իշխանս, զորս կարգէ թագաւորն, ի նմանէն եւ արքորեսցին կամ խրատեսցին: Իսկ զթագաւոր խրատել, եթէ այնպէս հարկ լիցի պահել զխաղաղութիւն, կամօք լիցի այլ թագաւորի եւ հայրապետի, եւ հաւասարութեանք ամենեցուն: Իսկ եթէ իշխանք եւ ազատք ինքեանց կացուցանեն իշխան, ի նոցունց միաբանութենէ արքորեսցի եւ կամ խրատեսցի: Այլ զթագաւորի կարգեալ իշխան թագաւորն արքորեսցէ եւ խրատեսցէ: Այլ իշխանաց իշխան՝ զիշխան խրատել կամ արքորել եւ զազատ.

թէ ի նոցունց կարգեալ իցէ՝ նոցունց միաբանութեամբ արասցէ, եւ թէ ի թագաւորէ՝ թագաւորին կամօք արասցէ: Իսկ ազատք զգինուորս ոչ կարեն խրատել, այլ հանել յինքեանց. այլ խրատել իշխանաց լիցի: Նմանապէս եւ զինուորքն զշինականսն ոչ կարեն արքտրել եւ ոչ խրատել, այլ արքտրել՝ ազատք, եւ խրատել՝ իշխանք: Չայդ ըստ այսմ կարգի իրաւացի գիտեմ դատաստան ի տունս թագաւորաց:

ԳԼՈՒԽ ՄԼԱ ՎԱՍՆ ՈՐ ՀԱՆԷ ԱՆԱՍՈՒՆ ԵՒ ՎՆԱՍԷ ԵՒ ՍՊԱՆԷ

Եթէ ոք ի կենդանեաց, ի սրբոց կամ յանսրբոց, մտեալ յանդաստան, յայգի, կամ յայլ ինչ այսպիսի, յօրան կամ ի խոտ դիզեալ, եւ տէր նորա զչարեալ հարցէ եւ սպանցէ, դատաստան լիցի՝ զեղեալ՝ վնասն վճարմամբ հատուցանել, եւ նա զսպանալ կենդանին, զոր եհարն, ըստ իրաւանց լիով հատուցէ, զի պարտ էր ի վնասէն հանել, այլ ոչ սպանել: Այլ ի հարկանելն քննութիւն լիցի. եթէ խրտուցեալ անկաւ եւ մեռաւ, զի ոչ գնեռանիւն կամէր, այլ զփախուցանելն, այդոքիկ յակամայից լինին, և զկէս գնոյն հատուցէ. ի հարուածսն տեսցեն կամքն: Իսկ եթէ բժշկելի իցէ հարուածն, զխափանածոյն եւ զբժշկութեանն տայցէ. այլ եթէ անբժշկելի իցէ հարուածն՝ թէ ոտից եւ թէ այլոց, եւ ի սուրբ կենդանեաց իցէ, զգինն լիով տայցէ, եւ նորա շաղիղն լիցի, եւ թէ յանսրբոց՝ բաւանդակ հատուցի: Եթէ կուրացուցէ, կամ զատամն ընկենուցու, կամ զեղջիւր, կամ զկող բեկցէ, թէպէտ եւ բժշկեսցի, զգինն ընդ չորս բաժանեալ՝ մի մասն ընդ միոյ վնասուն տացի. եւ այդ ուտելեաց եւ անուտելեաց լիցի: Եւ թէ զագի կտրեսցէ, մի ի չորից մասանց լիցի: Ապա թէ անասնոյ տեսոնն բազում անգամ ասացեալ իցէ զվնասն, եւ նա անփոյթ արասցէ, տեսցին այդոքիկ եւ այնպէս դատեսցին: Իսկ ոտից կաղութիւն մնացեալ՝ մի ի չորիցն լիցի գնոյն տուգանքն: Այլ ընդ խաղ եւ վայրապար վնասողացն առաւելութեամբ լիցի տուգանքն ի բեկանելն եւ ի հատուցանելն զգինն ի սպանանելն: